ԵԴ2/0786/02/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 ապրիլի 2024թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Լ. Սաղոյանս, ծանոթանալով «Հրշեջ Շահ-Ար» ՍՊ ընկերության և «Նեմրութ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Համահայցվորներ) ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի 26.12.2023 թվականի թիվ 4319-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Հրշեջ Շահ-Ար» ՍՊ ընկերության և «Նեմրութ» ՍՊ ընկերության անունից 31.01.2024 թվականին հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի 26.12.2023 թվականի թիվ 4319-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը նույն օրը մակագրվել է Դատարանի դատավոր Ա. Սաֆարյանին, իսկ նախագահող դատավորի աշխատակազմին է հանձնվել՝ 02.02.2024 թվականին:

Դատարանի 07.02.2024թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ թերությունները շտկելու և հայցադիմումը կրկին ներկայացնելու համար եռօրյա ժամկետի տրամադրմամբ:

Հայցադիմումը կրկին դատարան է մուտքագրվել 03.04.2024թ.-ին, իսկ նախագահող դատավորի աշխատակազմին հանձնվել՝ 08.04.2024թ.-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով ներկայացված հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը

համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Հրշեջ Շահ-Ար» ՍՊ ընկերության և «Նեմրութ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի 26.12.2023 թվականի թիվ 4319-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ և համարել Դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը:

Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 2024 թվականին մայիսի 27-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Լ. ՍԱՂՈՅԱՆ**